

## Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՃՈՒՂՈՒՐԵԱՆ, ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԱՀԱՆԱՅ.—Աղա սուրբ Սարգիսը եւ Մալաք տատի հաւատը. գիւղական կեանքից. Թիֆլիս, րոպ. Մ. Շարածէի, 1899 թ. 63 էջ. դինը 15 կ.:

Ով կարդացել է ձուգուրեան քահանայի «Մոռացած աշխարհները», նա նկատած կը լինի, որ ձուգուրեանը մի անուշադիր գրող է, և որ ալլ—Տւա բնորոշ չարկութիւնն է։ Նրա գրելու շնորքը ինքն իրան չի ճանաչում, ինքն իրան չի կրթում ու կանոնաւորում. և ալլ հանգամանքը իբր հեղեանք տալիս է մի երևոյթ, որին մենք «անուշադրութիւն» անունն ենք տալիս, աւելի լարմար արտազայտութիւն չունեալու պատճառով։ Անուշադիր լինելը նրա գրածներում երևում է ամեն կողմից. թէ նիւթի ընդրութեան, թէ գրածքի մասերի փոխադարձ կապի ու դասաւորութեան, թէ նիւթը մշակելու եղանակի, թէ գրածքի ձևի ու լեզուի և թէ նոյն իսկ հրատարակութեան կողմից։ Սա մի անարեւստ կերպով գործող շնորք է, որին անձանօթ են գործելու եղանակներն ու ճանապարհները։ Ուրիշ անգամի թողնելով մեր չափոնած

կարծիքի հիմնաւորելը նրա միւս գրածներինց բերած փաստերով՝ ալլ անգամ կանգ կ'առնենք մեր գրախօսելիք գրքովի վրայ <sup>1)</sup>, որ մի տեսակ մարմնացումն է ձուգուրեան գրողի պակասութիւնների։

ձուգուրեանի պէս գրողին, որ իրականութեան պարզ լուսանկարն է տալիս, որ ոչինչ չի ստեղծագործում սովորաբար, ալլ կեանքի էջերն է միայն արտագրում, ուրիշ չարկութիւնների շարքում՝ աւելի չի շողութիւն է հարկատր քան երեակալութիւն. որովհետեւ նրա տաւը զէպքերի և դիւքերի պարզ պարկերներ են, հասարակ, երես ու անգարդ, ուր չկալ հոգեբանութիւն,

<sup>1)</sup> Գրքովը նոյնանուն պատմական գրքի արտադրութիւնն է, որ լոյս է տեսել Նոր-Պարի 1896 թ. 8, 10, 11 և 12 № №-ում։ Ենթարկել է փոփոխութեան արտադրելիս թէ ոչ չենք կարող ասել, չենք համեմատել։

քնատրուութիւնների ընդհարում, կըրքերի խաղ ու մրցում. նա երեսն է վերցնում, այն ինչ որ երևում է. նա չի թափանցում ներսը. Եւ այդ չիչողութիւնը, ուրիշ խօսքով՝ երեւակաութեան այդ առաջին քայլը, թէև ունի էլ՝ բայց նա շատ անկիրթ է, խառն ու անորոշ:

Գրքովի նիւթը Ս. Սարգսի շարթին կատարող սովորութիւններն են. նկարագրած է մի նահապետական ընտանիք: Այդ ընտանիքի պապի անունը նա չիօթում է և մոռանում որս էջից չեփոյ. մի տեղ նա վարդան է (էջ 21), այլ տեղեր՝ Հանէս (էջ 35): Այդ ընտանիքի անդամները «որդամարդիկ, կանաչք և մանկունք թուով քառասուն» են (էջ 36). մի այլ տեղ այդ ընտանիքի «միմիալն արուք, օջախի չուրջը երեսուն հոգով մի շրջան» են կազմում (էջ, 62): Մեզ մի քիչ դժւար է թուում, բաղմաթիւ նահապետական ընտանիքներ տեսնելուց չեփոյ, երևակայել մի ընտանիք, որի անդամները <sup>3</sup>/<sub>4</sub>-ը արուներ են, մի ընտանիք, որ ունի «հարսներ» և «մանկունք» ու «աղջկունք»! Խօսք է՝ ասել է, առանց մի բոպէ ասածի մասին մտածելու կամ նկարագրածը չիչելու...

Տար. ս. Սարգսի պատմութիւնն է անում. թոռներից մէկը հարցնում է՝ ս. Սարգիսը կենդանի է. դատն ասում է. ուրեմն այն օրու պատմածս չէն լսել. երեխաներն ասում են՝ այն օրը նա ոչ տուն եկաւ.— «Հա դորթ, ասում է տարը, դու չուտումարանից եղի եկար» (էջ, 41): Նկարեցէք, որ տարը իր ակնար-

կած պատմութիւնն արել է «ընթրիքից չեփոյ» և վերջացրել «կէս գիշերից անց», աչակերպը կանոնաւոր դպրոցի աչակերպ է... Իսկ այդ ժամանակ, ինչ խօսք՝ որ դաս չի լինի... Այս աչակերպի անունն էլ մի տեղ Մխիթար է դուրս գալիս (էջ 56), ուրիշ տեղեր՝ Գրիգոր (էջ, 48): Եւ այլն:

Այս ամենը ցուց է տալիս, որ ձուղուրեանի չիչողութեան մէջ նկարագրելիք տեսարանները կցկտուր, անկարգ ու անորոշ են դուրս գալիս. անձերը որոշ չեն, դէպքերն իրար են խառնուում՝ որ նշանակում է թէ նրա շնորքը կրթած չէ, իսկ ինքն անձանօթ է գրեւուն, թէև մօր եօթ տարուալ գրող է և անկասկածելի շնորքի տէր. աչտեղ, ինչ խօսք՝ որ կարող է նաև մասամբ անիութեթիւնը դեր խաղալ:

Գանք նիւթին, դրա հետ միանգամայն և հեղինակի շնորքի մի այլ կողմին: Ըստ երեւոթի նրա նպատակն է նկարագրել ս. Սարգսի շարթին զիւղում կատարող սովորութիւնները. բայց նա ուղղակի և միմիալն այլ նպատակին չի դիմում, այլ խառնում է մի քանի բան իրար հետ և ոչ մէկին էլ կարգին չի հասնում, ու աչպիսով նպատում է, որ գրքովին ինքն ըստ ինքեան քիչ արժանիք ունենայ Գրքովի մի խոշոր մասը ս. Սարգսի մասին եղած աւանդութիւններն են բռնում, որ ըստ էութեան կապ չունին սովորութիւնների հետ. նրանց կապը օրգանական չէ և մէկը միւսին չէր փնտրի, եթէ բացակայէր: Մի տեղ հազիւ գժւած է ուտումարան լաճախող աչակերպի

նախապաշարունակներից ազատող մտքի և նահապետական հաւատի ընդհարումը, որ խսկի գրեածքի նյութին չի վերաբերում և կարող է ամենևին չլինել, բոլորովին կարող է դուրս ձգել և Մալաք տառի վաչք ընկնելը փռած ցորենն ուտելու եկող խոզերին խոկելիս, լիովին աւելորդ միջնադէպ է: Ինչ էլ ընտրելու լինէք այս գրքովկից, որպէս զըրւածքի գլխաւոր նիւթ, միշտ դուրս ձգելու և կապ չունեցող բաներ կը գտնէք:

Այս ամենն ապացոյց է, որ ձուղուրեանը քիչ է ճանաչում աչն անհրաժեշտ լատիւթիւնները, որ պիտի ունենաւ մի բեւեռութեամբ կան գրեածք, այս ցոյց է տալիս, որ նրա շնորքը չի իմանում իր անելիքն ու նրա սահմանները, ընտրութիւն չի անում կարևորի և անկարևորի, հարկաւորի և աւելորդի, գլխաւորի և մասնաւորի միջև:

Նոյն երևութիւն է ձեր աչքին ընկնում, երբ նաչում էք ձուղուրեանի գրելու ձևին, նոյն «անուշադրութիւնն» ամեն տեղ: Կարճ կապելու համար՝ մի քանի գիծ միայն.—Ո՛նց անեմ Աստօծ—երթկից դուրս նաչելով— ո՛նց անեմ, կատաղութիւնը գլուխս ա գալիս» և աչն (էջ, 6): «Երթկից դուրս նաչելով» ինչ արաւ ասողը... գրելու աղ ձեր կարելի է միայն թատերախաղերում գործ ածել և ոչ պատկերներում կամ վէպերում: (Տես նոյնպէս և էջ 16): Այս կարճ խօսակցութիւնը լսեցէք:

—Վճճ, ո՞վ տառի ջան, ո՞վ գիտեղիլ—այս ու աչն կողմից հարցրին երեխաւքն ու պատանիները:

—Սուրբ Մարգիսը, — խորհրդաւոր ձաչնով և կախարդական հաչեացքով պատասխանեց տառը:

—Ո՛վ ա սուրբ Մարգիսը, տառի ջան.— հարցրեց նրա թոռներից պատանին:

Ի՞նչ է նշանակում «կախարդական հաչեացք» այս դէպքում և ընդհանրապէս, ինչ է նշանակում «թոռներից պատանին»։ Ինչ պատանի, չէ որ անտեղ «երեսաներ ու պատանիներ» կաչին: Մի աչ տեղ՝ (էջ 37) եղ ու մեղր ուտելուց չետոյ տան անդամները «լագեցան, և սափորներով սառը ջուրն էլ աներկիւղ զլիններին քաչեցին...»: Ինչացու է աչտեղ աներկիւղ բառը, և նոյն տեսակ անտեղի բառեր ու խօսքեր ուրիշ տեղերում: Ի դէպ՝ եղումեղր ասի՝ միտս եկաւ, հեղինակն իր նահապետական ընտանիքի աւանդապահ անդամներին ս. Մարգսի ուրբաթ օրը եղումեղր է ուտացնում, որքան մէնք գիտենք, աչ օրը փոխնձի պատն են միայն բաց անում, հեղեւեալ օրն է միայն կատարեալ ուտիսը, երբ խաչիլ են ուտում... Գըրւածքի լեզուն ձուղուրեանի խառն ու անկանոն լեզուն է, ուր գրաբարը, աչխարհաբարն ու գաւառական խօսք ու դարձեալները կազմում են մի անհարկաչնակ հարեանութիւն, որ սակաչն այս անգամ շատ լաւ ներդաչնակում է գրքովկի շփոթ բովանդակութեան, այս ամենի վրաչ աւելացրէք վատ սրբագրութիւն ու ս. Մարգսի օղորմելի պատկերը...

Այս գրքովը ձուղուրեանի անլաչող գրեածքներից մէկն է, եթէ ոչ ամենամանաչն ու վատը: Հերա-

քրքրական է ազգագրական տեսակէտից, եթէ հեղինակը հաւատարմութեամբ է իր պատկերում մէջ բերել այն, ինչ պատմում են Մալաք տատերը ս. Սարգսի մասին: Մալաք տատի ասելով՝ ս. Սարգիսը հաչ է եղել և կուել է մեր «լիս-հաւատի» համար Ուլիանոս թագաւորի և թուրքերի դէմ կուում էլ մեռել է:

Կան հասարակական տեսակէտից հետաքրքրական ուրիշ գծեր, օրինակ՝

վերը բերած աշակերտի և նահապետական հաւատի ընդհարումը. Մալաք տատի՝ թոռներին աղօթել սովորեցնելը և նրանց պառչաճի լեզուներ պատմելը, բայց դրանք իսկ որ գծեր են. հեղինակը բաւականաչափ չի վեր հանել ու լաւ պատկերացրել, որ կարելի լինէր կանգ առնել, գնահատել նրանց ու եզրափակումների գալ:

Ն. Աղաւանց

ԵՆՆԹ. -- «Կարձ» վէպ, արտատրպած «Մուրճ» ամսագրից. Թիֆլիս, տպարան Մ. Դ. Ռոյրինեանցի, 144 երես, զինն է 40 կողէկ:

Երեք վարդապետացու, երեկ էջմիածնի ճեմարանը նոր աւարտած, Շիրակի մէջ ամառալին ճանապարհորդութիւններ են անում: Սոքա պիտի վերադառնան էջմիածին սարկաւազ ձեռնադրելու և արտասահման ուղևորելու համար, այնտեղ ասրաւածարանութիւն պիտի սովորեն և նոր ուժերով պիտի դան-«... նորէն հոգի և ոգևորութիւն մտցնելու այդ սուրբ կարգերուն և աղօթքներուն մէջ և բժախնդիր ճշտութեամբ ու կանոնաւորութեամբ... կատարելու մեր սրբակրօն պապերու մեզի աւանդած ամէն մէկ ծէսն ու կարգը»: Վէպի սկզբում չաչրնում է վարդապետացուներից Արտաշէս Սիրաքեանը միայն, որը գալիս է Խրճկոնքի վանքը սպասելու իւր ընկերներին: Նոյն վանքը ամառանոց է եկել Ալէքսանդրապոլից Քանեանների ընտանիքը: Պարոն Քանեանը

իրաւարան է, լաչն զարգացման և հասարակական ձգտումների տէր մի մարդ: Սրանց հետ է նաև տիկին Քանեանի քույր Շուշանիկը, որը թիֆլիսում մանկաբարձութիւն է սովորում: Քանեանների մենակութիւնը նրանց մտքեցնում է Արտաշէսին: Քանեանը նրա հետ վէճի է բռնում, որից մենք ծանօթանում ենք թէ Քանեանի և թէ Արտաշէսի հալեացքների հետ: Արտաշէսը մասնաւորապէս մտերմանում է օրիորդ «Շուշիկի» հետ. սրանց չարաբերութիւնները արդէն խիստ մօր են դառնում—հեռու զբօսանքներ ձորերում, երկար խօսակցութիւններ: Եւ ահա, երբ այդ մտերմութիւնը ամենամեծ աստիճանին էր հասել, երբ Արտաշէսը սպասում էր նշանակւած ժամի հասնելուն, որ Շուշիկի հետ զբօսանքի գնալ, որի համար... ընտրած էր ձորի ամենէն ժալոտր ու ամենէն